ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը Իր երրորդ հայրապետական այցելությունը շնորհեց Ադրբեջանի հայոց թեմին, հունիսի 7—10-ը:

Վեհափառ Հայրապետը շաբաթ օրը, հունիսի 7-ի երեկոյան, Բաքվի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում նախագահեց հանդիսավոր ժամերգության և հաջորդ օրը, կիրակի, ս. պատարագ մատուցեց և քարոզեց խուռներամ հայ հավատացյալ ժողովրդին:

Հետմիջօրեի Ադրբեջանի թեմական առաջնորդ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և թեմական խորհուրդը ճաշկերույթ տվեցին ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ճաշկերույթին ներկա էին Ադրբեջանի և Անդրկովկասի Շեյխուլիսլամ Սուլեյմանզադեն, ռուս պրավոսլավ եկեղեցվո Ստավրոպոլի և Բաքվի եպիսկոպոս Նորին Սրբազնություն Իոնան՝ իրենց շքախմբերով, ինչպես և այլ հարանվանությանց ներկայացուցիչներ:

Ներկա էին նաև՝ Ադրբեջանի Մինիստրների սովետին առընթեր կրոնից գործերի լիազոր պրն. Աբդուլլահ Ախադովը և իր տեղակալ պրն. Սիմեոն Իսլեվովոյը:

Երկուշաբթի, հունիսի 9-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն տվեց Սովետական Ադրբեջանի Մինիստրների սովետի նախագահ, Նորին Վսեմություն Էնվեր Ալիխանովին՝ հայ եկեղեցու ողջույնը հաղորդելով Ադրբեջանի եղբայր ժողովրդին և կառավարության: Վարչապետի և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ սիրալիր, ջերմ զրույց:

Վեհափառ Հայրապետը նույն օրը փոխ-այցելություն տվեց Ադրբեջանի և համայն Անդրկովկասի Շեյխուլիսլամին և ապա եղավ ռուսաց Մայր եկեղեցում, ուր Նրան դիմավորեցին Նորին Սրբազնություն Իոնան եպիսկոպոսը, քահանայից դասը և հոծ թվով ռուս ու հայ հավատացյալներ: Տեղի ունեցավ

հանդիսավոր ժամերգություն՝ քառաձայն երգչախմբի կատարմամբ: Վեհափառ Հայրապետը քարոզով մխիթարեց և ապա օրհնեց հավատացյալ ժողովրդին:

Ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, երեկոյան տեղի ունեցավ մեծ ճաշկերույթ՝ տրված Ադրբեջանի Ծեյխուլիսլամի և ռուսաց եկեղեցու թեմական առաջնորդի կողմից: Ճաշկերույթին ներկա էին նաև կրոնից լիազորը և իր տեղակալը: Փոխանակվեցին ողջույնի և եղբայրական սիրո խոսքեր՝ ոգեվորիչ մթնոլորտում:

Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներն էին՝ գեր. տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը՝ առաջնորդ թեմին հայոց Վրաստանի, հոգ. տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը՝ վանահայր Գեղարդա վանքի, և Հայկ Առաքելյանը՝ դիվանապետ Մայր Աթոռի:

Վեհափառ Հայրապետը վերադարձավ սուրբ Էջմիածին հունիսի 10-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

12 հունիս 1969 թ.,
Ս. Էջմիածին